

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Երեքշաբթի, 9 Յունուար.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, գըլխաւորութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարքին եւ Միաբանութեան:

Նոյն օրը ժամը 16:30-ին, հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան Սրբազան Հօր, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Հայերու հետեւակ՝ Ասորի եւ Ղպտի եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Շաբաթ, 20 Յունուար.- Հայոց Սուրբ Ծննդեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ մինչեւ կէսօր, յաջորդաբար Պատրիարքարան շնորհաւորելու եկան Լատինաց Միաբանութիւնը եւ Կաթողիկ, Բողոքական, Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետերը եւ ներկայացուցիչները:

Ժամը 11:15-ին, Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարք Սրբազանն իր միաբաններով նախ խոնկով եւ վարդաշուրով դիմաւորուեցաւ Վանքի դրան առջեւ, ապա առաջնորդուեցաւ Պատրիարքարան:

Երկուշաբթի, 22 Յունուար.- Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան՝ Տիար Անատոլի Վիքթորով այցելեց Պատրիարքարան՝ շնորհաւորելու Ն. Ա. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան եւ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Նոյն օրը, առաւօտեան ժամը 10:30-ին, Պատրիարքարան՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն շնորհաւորելու եկան Ֆրանչիսկեան Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Քրիսթոս Հայր Ֆրանչեսկո Փաթոնի:

Երեքշաբթի, 30 Յունուար.- Առաւօտեան ժամը 9-ին, Երուսաղէմի մէջ ԱՄՆ-ի դեսպանատան «Պաղեստինեան գործերու» վարիչ՝ Տիար Ճորճ Նոլլ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Կալուածոց տեսուչ՝ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան եւ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան, որոնք ընթացքին անդրադարձ եղաւ նաեւ «Կովերու պարտէզ»-ին շուրջ տեղի ունեցող անցուդարձերուն:

Հինգշաբթի, 1 Փետրուար.- Առաւօտեան ժամը 10-ին, Ռամալլայի մէջ Կիպրոսի ներկայացուցչութեան ղեկավար՝ Տիար Դեմետրիս Ասսոս այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Շաբաթ, 17 Փետրուար.- Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի գլխաւոր քարտուղար՝ Վերապատուելի Դոկտ. Պրօֆ. Ճերի Փիլլա այցելեց Երուսաղէմի Պատրիարքաներուն եւ հոգեւոր պետերուն: Հանդիպումը տեղի ունեցաւ Յունաց Պատրիարքարանին մէջ: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Հինգշաբթի, 22 Փետրուար.- Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ հիւպատոս՝ Տիար Դաւիթ Ալաւերդեան ընկերակցութեամբ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեանի, եւ նախկին հիւպատոս՝ Տիար Նարեկ Ղազարեանի այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Կալուածոց տեսուչ՝ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան: